

09.04.2021 17:50



Ցավով տեղեկացանք, որ 2021 թվականի ապրիլի 9-ին կյանքից հեռացել է մեր գործընկեր **Փաստաբան Սեդրակ Ասատրյանը**:

Սեդրակ Ասատրյանը 2008 թվականից հանդիսանում է փաստաբան, իսկ 2017 թվականից՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ: **Սեդրակ Ասատրյանը** «Կոնցեռն-Դիալոգ» փաստաբանական գրասենյակի համահիմնադիրն է և բազմամյա ղեկավարը, բազմաթիվ հողվածների, ինովացիոն առաջարկությունների հեղինակ էր, ինչպես նաև «ՀՀ Նոր աշխատանքային օրենսգիրք, Աշխատանքային պայմանագրեր» և «ՀՀ Նոր աշխատանքային օրենսգիրք, Գործատուի ներքին և անհատական իրավական ակտեր» և «Փաստաբանական գրասենյակի կառավարում» գրքերի համահեղինակ:

Սեդրակ Ասատրյանը հատկապես կարևորում էր երիտասարդներին, իրեն էլ համարում էր երիտասարդ:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը, այդ թվում՝ խորհրդի կազմը և աշխատակազմը ցավակցություն ու զորակցություն է հայտնում **Սեդրակ Ասատրյանի** ընտանիքին, հարազատներին ու ընկերներին:

Սեդրակ Ասատրյանի հոգեհանգստի արարողությունը տեղի կունենա **2021 թվականի ապրիլի 10-ին, ժամը 16:30-ից՝ Սարգսյան պալատի (Նախկին Հոկտեմբեր) Սուրբ Աստվածածին եկեղեցում**, իսկ հուղարկավորությունը տեղի կունենա **2021 թվականի ապրիլի 11-ին ժամը 14:00-ին՝** նույն եկեղեցուց:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան